ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ապրիլի 2019թ. թիվ 238-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՌԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 7, 9, 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Կաթնառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի 26.03.2019թ. և Տաշիր համայնքի ղեկավարի 08.04.2019թ. թիվ 484-19 գրությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածի «ՀՀ Լոռու մարզի Կաթնառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ մասում՝

1. «Սարգսյան Օֆելյա» բառերը փոխարինել «Մովսիսյան Աիդա» բառերով, «Կիրակոսյան Անուշ» բառերը՝ «Բաղդասյան Թամարա» բառերով, «Թադևոսյան Երանյակ» բառերը՝ «Խոդոյան Հասմիկ» բառերով և «Ջանոյան Հրանտ» բառերը՝ «Ասլանյան Նորայր» բառերով:

2. Վերահաստատել մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Հայկ Առաքելյանի, ծնողական խորհրդի կողմից առաջադրված Լորետա Սուքիասյանի և համայնքի ղեկավարի կողմից առաջադրված Կարեն Մովսիսյանի թեկնածությունները:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

29/04/2019

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. ապրիլի 19
ք.Վանաձոր